

1.2.4. Տրանսպորտ

**Բեռնափոխադրումներ.** 2001թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ նվազել է 8.7%:

**Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2001թ. հունվար- ապրիլ	2001թ. հունվար-ապրիլը 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ,%-ով	2001թ. ապրիլ	2001թ. մարտի նկատմամբ,%-ով
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա</b>	1120.7	91.3	309.8	106.1
<i>այդ թվում՝</i>				
<b>Երկաթուղային տրանսպորտով որից.</b>	304.5	76.6	110.6	2.0 անգամ
արտահանվել են բեռներ	49.4	133.9	18.0	4.6 անգամ
ներկրվել են բեռներ	223.5	77.6	86.4	2.9 անգամ
ներհանրապետական փոխադրումներ	31.6	43.5	6.2	27.1
<b>ավտոտրանսպորտով որից.</b>	543.4	121.7	162.4	100.2
արտահանվել են բեռներ	26.7	149.2	9.0	112.5
ներկրվել են բեռներ	73.8	111.7	17.4	84.5
ներհանրապետական փոխադրումներ	442.9	122.2	136.0	101.9
<b>օդային տրանսպորտով որից.</b>	3.7	105.7	1.0	90.9
արտահանվել են բեռներ	1.6	106.7	0.4	80.0
ներկրվել են բեռներ	2.1	105.0	0.6	100.0
<b>խողովակաշարային տրանսպորտով</b>	269.1	70.7	35.8	49.2

**Երկաթուղային տրանսպորտ.** 2001թ. հունվար-ապրիլին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ նվազել է 23.4%: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 73.4% (2000թ. հունվար-ապրիլի 72.5%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 16.2% (նախորդ տարվա հունվար-ապրիլի 9.3% դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 10.4% (նախորդ տարվա հունվար-ապրիլի 18.2% դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2001թ. հունվար-ապրիլին 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ սև մետաղների ջարդոնի փոխադրման ծավալն ավելացել է 14.3%, իսկ քիմիական և հանքային պարարտանյութերի փոխադրման ծավալը նվազել է 95.7%, հանքային շինարարական նյութերինը՝ 72.4%, սև մետաղներինը՝ 66.7, հացահատիկի և աղացվող մթերքներինը՝ 45.6 %, ցեմենտինը՝ 33.0, նավթ և նավթամթերքներինը՝ 21.8 %:

Վազոնների միջին օրական բեռնաթափումը հունվար-ապրիլին կազմել է 38 վազոն և նախորդ տարվա հունվար-ապրիլի նկատմամբ նվազել է 6 միավորով, իսկ բեռնումը կազմել է 14 վազոն և նվազել 3 միավորով: Նույն ժամանակաշրջանում վազոնապտույտը կազմել է 14.6 օր և նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ արագացել է 2.6 օրով:


**1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ**

**Ավտոմոբիլային տրանսպորտ.** 2001թ. հունվար-ապրիլին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-ապրիլի ցուցանիշի նկատմամբ աճել է 21.7 %, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 13.6% (2000թ. հունվար-ապրիլի 14.8%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 7.7% (2000թ. հունվար-ապրիլի 14.2% դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 4.9% (2000թ. հունվար-ապրիլի 4.0%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 10.9% (2000թ. հունվար-ապրիլի 17.3%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 81.5% (2000թ. հունվար-ապրիլի 81.2%-ի դիմաց):

**Օդային տրանսպորտ.** 2001թ. հունվար-ապրիլին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը 2000թ. հունվար-ապրիլի ցուցանիշի նկատմամբ աճել է 5.7%, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 56.8% (2000թ. հունվար-ապրիլի 57.1% դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 43.2% (2000թ. հունվար-ապրիլի 42.9 % դիմաց):

**Խողովակաշարային տրանսպորտ.** 2001թ. հունվար-ապրիլին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-ապրիլի ցուցանիշի նկատմամբ նվազել է 29.3 %:

**Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին տեսակների 2001թ. հունվար-ապրիլին(տոկոսներով)**



2000թ. հունվար-ապրիլին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 32.4 %, ավտոմոբիլայինը՝ 36.3 %, օդայինը՝ 0.3%, խողովակաշարայինը՝ 31.0 %:

**Բեռնաշրջանառություն.** 2001թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ նվազել է 27.3 %:

**Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**


	2001թ. հունվար- ապրիլ	2001թ. հունվար- ապրիլը 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %-ով	2001թ. ապրիլ	2001թ. ապրիլը 2001թ. մարտի նկատմամբ, %-ով
<i>Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն. տոննա-կմ այդ թվում՝</i>	615.7	72.7	101.6	63.3
Երկաթուղային տրանսպորտով	85.2	80.9	29.4	177.1
ավտոտրանսպորտով	11.6	130.3	2.7	75.0
օդային տրանսպորտով	2.6	108.3	0.8	114.3
խողովակաշարային տրանսպորտով	516.3	70.7	68.7	49.2

**Ուղևորափոխադրումներ.** 2001թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2000թ. հունվար-ապրիլի ցուցանիշի նկատմամբ աճել է 6.0 %:

**Ընդհանուր ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2001թ. հունվար- ապրիլ	2001թ. հունվար- ապրիլը 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %-ով	2001թ. ապրիլ	2001թ. ապրիլը 2001թ. մարտի նկատմամբ, %-ով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝	49389.9	106.0	12648.4	94.0
Երկաթուղային տրանսպորտով	275.0	135.1	90.5	115.0
ավտոտրանսպորտով	39585.6	107.6	10071.1	93.3
օդային տրանսպորտով	179.2	121.9	50.0	106.8
էլեկտրատրանսպորտով	9350.1	99.0	2436.8	96.2

**2001թ. հունվար-ապրիլին ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին տեսակների (տոկոսներով)**



**1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

2000թ. հունվար-ապրիլին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.4%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 79.0%, օդային տրանսպորտինը՝ 0.3% և էլեկտրատրանսպորտինը՝ 20.3%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2001թ. հունվար-ապրիլին կազմել է 52.4 %, իսկ տրոլեյբուսով՝ 28.7, տրամվայով՝ 17.4 և ճոպանուղով՝ 1,5 %:

**Ուղևորաշրջանառություն.** 2001թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել է 21.4 %-ով:

**Ընդհանուր ուղևորաշրջանառության ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2001թ. հունվար-ապրիլ	2001թ.հունվար-ապրիլը 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %-ներով	2001թ. ապրիլ	2001թ.ապրիլը 2001թ. մարտի նկատմամբ, %-ներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղ-կմ <i>այդ թվում՝</i>	800.6	121.4	195.3	80.4
երկաթուղային տրանսպորտով	11.6	120.8	4.1	141.4
ավտոտրանսպորտով	583.8	122.2	133.3	70.8
օդային տրանսպորտով	166.6	125.5	47.8	116.3
էլեկտրատրանսպորտով	38.6	98.5	10.1	97.1

**Տրանսպորտային պատահարներ.** Հանրապետությունում 2001թ. հունվար-ապրիլին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, ճանապարհատրանսպորտային պատահարները 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել է 8.7 %:

**Ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները**

	2001թ. հունվար-ապրիլ	2001թ.հունվար-ապրիլը 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %-ներով	2001թ. ապրիլ	2001թ.ապրիլը 2001թ. մարտի նկատմամբ, %-ներով
ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդամենը	262	108.7	77	126.2
Ձուկվել են, մարդ	63	134.0	20	153.8
Վիրավորվել են ,մարդ	287	102.9	74	113.8